Միջնադարյան հայերեն ձեռագրերի հիշատակարանները, նման վիմական արձանագրությունների, այն կարևոր սկզբնաղբյուրներն են, որոնց հավաքումն ու գիտական սկզբունքներով հրատարակությունը նպաստելու է հայ ժողովրդի պատմության մի շարք բնագավառների ուսումնասիրությունը խորացնելու գործին: Նրանցում ուշագրավ նյութեր կան նաև հարևան ժողովուրդների՝ վրացիների ու ադրբեջանցիների, և հայկական գաղթավայրերի պատմության մասին:

Սույն ժողովածուն ընդգրկում է ԺԴ. դարի բոլոր հայերեն ձեռագրերի հիշատակարանները, որոնք մատչելի են եղել կազմողին: Ըստ որում 513 հիշատակարան քաղված է Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետ. Ձեռագրատան (Մատենադարան) ձեռագրերից և 332 հիշատակարան՝ անտիպ ու հրատարակված ձեռագրաց ցուցակներից:

Դրանց մեծագույն մասը հրատարակվում է առաջին անգամ:

Պատմության Ինստիտուտ